

## Ի Ծ Ն Ո Ւ Ն Դ Փ Ր Կ Զ Ի Ն

### Ն Ո Ւ Ա Գ

Մի՛ ես, երկիր, մի՛ ես ողբար զնախաստեղծին պատրանաց բոթ . . .  
վրիժակազէն վառեալ 'ի զարդ զաջ իւր ահեղն Արդարութիւն,  
Ըզձեռն յանդուգն 'ի մահաշունչ պըտողն ճաշակ տեսեալ կարկառ,  
Կայծակնացայտ հուր 'ի յաշկունսն՝ Ըզվրէժ յարե վահին կընքեաց :

Եւ նովին բոց սըրտմըտութեամբ սլացեալ յաթոռն Ամենակալ,  
Ըզկընքեայն արկ առաջի զմուրհակ պարտեացն եղեռնաւոր .  
Եւ 'ի մի քթիթ Անմահ աւացն՝ անդէն փոշի յունայն սահմանս,  
Ըզտիեզերս աշխարհագունդ սպառնայր ցըրուել վայրավատին :

• Ի տեսիլն յայն ահեղ՝ սոսկաց Գթութիւնն ամենախնամ,  
Վազեալ ընդոստ՝ էջ յաթոռոյն, և թափեալ զշանթն ամենակուլ  
Ի ձեռաց Արդարութեան, առ ըզմուրհակն անքաւելի,

էջ յերկիր, էջ 'ի մըսուրն, էջ 'ի յանդունդս ունայնութեանց,  
Եւ զմարդն յանձին բարձեալ 'ի վեր ել, 'ի Գողգոթ ել, յերկինս ել . . .  
Ո՛վ երջանիկ մեղք, մայր դու ծնող այսդոյն բարեաց երկնապարգև :

Հ. Ա. Թ.

## Գ Ո Ր Ր Է Ժ Ժ Ի Ո Յ Ա Ն Տ Ո Ն Ա Լ Լ Է Կ Ր Ի

### Պ Ա Տ Կ Ե Ր Ա Հ Ա Ն

Այս երևելի իտալացի պատկերա-  
հանը ծնաւ յամին 1497 Գորբէճճիոյ  
քաղաքին մէջ, որ յետոյ իրեն մական-  
նունն տեղ տրուեցաւ : Կարծիք կայ  
թէ վարժապետ ունեցած չլլայ, բայց  
ընդունելի չերեիր այս : Պատկերահան  
հօրեղբայր մ'ունէր Լարենտիոս ա-  
նունով, որ հաւանորէն անոր նախակը-  
թանաց ուսուցիչ եղած է : Կ'ըսուի նաև  
թէ յամին 1510 ի Մոտենա գնացած ըլ-  
լայ, Փրանկիսկոս Ֆրարիէն անդրիսագոր-  
ծութիւն սորուելու, որ այն ժամանակ  
ները շատ յարգի էր այն քաղաքին մէջ :  
Վասն զի ինքն արձանագործ ալ ե-  
ղաւ, և հօն Ս. Մարգարիտայի եկեղե-

ցւոյն մէջ Պեկարելլիի հետ անդրիա-  
խումբ մը շինեց, որուն երեք գեղեց-  
կագոյն գէմբերն իրեն արդիւնքն են :  
Իրաւընէ 'ի Մօտենայ եղաւ ուր կրցաւ  
Գորբէճճիոյ զլիաւորապէս կրթուիլ  
արուեստին մէջ : Հաստատող կայ որ  
յետոյ Գորբէճճիոյ՝ Անդրէաս Մանդե-  
նիայի քով վարժած ըլլայ . սակայն  
այս կարծեաց անհիմն ըլլալը կ'իմա-  
ցուի, երբ մտածենք թէ Մանդենիա  
1500 ին վախճանեցաւ, մինչդեռ նոյն  
ժամանակ տասնուերկու տարեկան էր  
ինքն : Ալլէկրիի առաջին երկասիրու-  
թիւնն է Ս. Անտոն, զոր նկարեց 'ի  
Գարբի, և է այժմ 'ի թանգարանին